ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2410-Ա « 11 » մայիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԱՇԳԱԲԱՏ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Թուրքմենստանի մայրաքաղաք Աշգաբատի քաղաքապետ Ռահիմ Գանդիմովի հրավեր-նամակը՝ աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում, «Սպիտակ քաղաք–Աշգաբատ 2026» միջազգային ցուցահանդեսի և համաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանին 2026 թվականի մայիսի 23-ից 26-ը ներառյալ գործուղել Թուրքմենստանի մայրաքաղաք Աշգաբատ:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին՝ բացառությամբ գիշերակացի, որը հոգում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246